ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2024 թ. հունիսի 6-ի թիվ 6 նիստի

Նիստն սկսելուց առաջ դեկան Ն. Մարտիրոսյանն առաջարկեց բաց քվեարկությամբ հաստատել օրակարգը: Ներկաները միաձայն կողմ քվեարկեցին:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաղորդումը ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների վերաբերյալ:

Ն. Մարտիրոսյանը նշեց, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները կազմակերպվել են նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն, տեխնիկապես կահավորված լսարանում և հրապարակային:

Դեկանը, անդրադառնալով ներկայացված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման և ներկայացման որակներին, նշեց, որ քիչ չէին այնպիսի աշխատանքները, որոնք կարելի է ներկայացնել ցանկացած ակադեմիական միջավայրում: Ն. Մարտիրոսյանը անդրադարձավ նաև ղեկավարների և ընդդիմախոսների կատարած աշխատանքներին: Քննարկվեցին ավարտական աշխատանքների թեմաները վերանայելու, լավագույն աշխատանքների գիտագործնական առաջարկությունները հանրայնացնելու հնարավորությունները:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Դ. Վ. Պետրոսյան, Գ. Մ. Աբրահամյան, Ա. Յու. Երզինկյան, Ա. Շ. Ավետիսյան, Ա. Մ. Մարտիրոսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- Դեկան Ն. Մարտիրոսյանի հաղորդումը Միացյալ Թագավորություն կատարած աշխատանքային այցի արդյունքների մասին:

Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ 2024թ. ապրիլի 22-ից 26-ը BBC Media Action կազմակերպության հրավերով այցելել է Մեծ Բրիտանիա (Լոնդոն և Քարդիֆ):

Հանդիպումներ են տեղի ունեցել Թոմսոն Ռոյթերս հիմնադրամում, «Ռոյթերս»-ում և «BBC»-ում, Լոնդոնի Սիթի համալսարանում և Քարդիֆի համալսարանում:

Պատվիրակությունը, որի կազմում էին նաև ներկայացուցիչներ Վրաստանից, Ուկրաինայից և Մոլդովայից, ծանոթացել են լրագրողական կրթության կազմակերպման բրիտանական փորձին, խոսել փոխգործակցության հնարավոր ուղիների մասին:

Պայմանավորվածության համաձայն՝ առաջիկայում ակնկալվում է բրիտանացի գործընկերների այց Երևանի պետական համալսարան, ինչպես նաև համատեղ նախագծերի իրականացում:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Դ. Վ. Պետրոսյան, Գ. Մ. Աբրահամյան, Ա. Ռ. Մենեմշյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- **Ա. Մենեմշյանի հաղորդումը 2023/24 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների և մեկնարկի մասին:**
Նշվեց, որ քննությունների ժամանակացույցը հաստատված է, հունիսի 10-ից կմեկնարկի քննաշրջանը: Ա. Մենեմշյանը անդրադարձավ նաև գնահատականները, հաճախումների համար տրվող միավորները ժամանակին ռեգիստրարում գրանցելու խնդրին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Գ. Մ. Աբրահաման:*

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- **Բակալավրիատի «Լրագրություն» կրթական ծրագրի ղեկավար Ա. Մենեմշյանի հաշվետվությունը:**
Ա. Մենեմշյանը նշեց, որ 2023/2024 ուստարում ԿԾ ընդունվել է 49 և ավարտել է 70 ուսանող: Այդուհանդերձ, դիմորդների թիվը նախորդ տարվա համեմատ ավելի է. եթե 2023/2024 ուստարում 50 տեղի համար ծրագիրն ունեցել է 56 դիմորդ (1 տեղին 1,1 դիմորդ), ապա 2024/2025 ուստարվա 45 տեղի համար մայիսի 10-ի դրությամբ արդեն հայտագրվել է 70 դիմորդ (1 տեղին 1,6 դիմորդ): Դիմորդների թվի ավելացումը Ա. Մենեմշյանը պայմանավորեց դիմորդներին դեպի մասնագիտություն կողմնորոշելու ուղղությամբ ֆակուլտետում տարվող աշխատանքներով՝ այցելություններ ՀՀ ավագ դպրոցներ, աշակերտների հյուրընկալում ֆակուլտետում:
Ավարտական կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքները, ինչպես նաև նրանց ընդհանուր 4 տարիների առաջադիմությունը բավարար գնահատվեց. 70 ուսանողից 17-ն ավարտել են ծրագիրը գերազանց առաջադիմությամբ, 41-ը՝ լավ, իսկ 12-ի ընթացիկ ՄՈԳ-ը բավարարի սահմաններում է:
Այս տարի ծրագիրն ավարտել է նաև Արցախից տեղահանված 7 ուսանող: Նրանց ինտեգրումը ուսումնական գործընթաց պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի շնորհիվ եղել է սահուն:
Ուսանողական հարցումների արդյունքներն ամփոփելով՝ Ա. Մենեմշյանն արձանագրեց, որ դեռ 2-րդ կիսամյակի աղյուսներն ամբողջական չեն, բայց այս պահի տվյալներով 4-ից ցածր գնահատվել են ԿԾ 5 դասախոս, որոնցից 3-ը գնահատվել են 3.5-ից ցածր:
Ուսանողների հիմնական դժգոհություններն առնչվում են ֆակուլտետի տեխնիկական ոչ բավարար հագեցվածությանը և գործնական ժամերի արդյունավետությանը: Նշվեց, որ այս ուղղություններով իրականացվել են քայլեր՝
ա) տեխնիկական համալրման համար ֆակուլտետի ղեկան Ն. Մարտիրոսյանը 2 տարբեր հայտերով (Հեռուստաստուդիայի և PODCAST room-ի համար) դիմել է ԵՊՀ ռեկտորին. տեխնիկական բավականին մեծ համալրում սպասվում է մինչև սեպտեմբեր,

բ) Ֆակուլտետը դիմել է 3 գրանտային ծրագրերի, որոնցից մեկը հաջողել է, և 2024 թ. հունվարին ֆակուլտետը համալրվել է ԱՄՆ պետդեպարտամենտի տրամադրած տեխնիկական միջոցներով,

գ) BBC Media Action-ի հետ համագործակցության շրջանակում այս պահին իրականացվում են ԿԾ «Թվային ժուռնալիստիկա» դասընթացի և «Ժուռնալիստիկայի տեսություն և պրակտիկա» դասընթացի փաստերի ստուգմանն առնչվող հատվածի բովանդակության լրամշակումներ, որոնք ավելի արդյունավետ կդարձնեն այս դասընթացների գործնական հատվածները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Գ. Մ. Աբրահամյան, Ա. Մ. Մարտիրոսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ «Լրագրություն» կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- **Մագիստրատուրայի «Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցային տեխնոլոգիաներ» կրթական ծրագրի ղեկավար Ա. Ավետիսյանի հաշվետվությունը:**

Ա. Ավետիսյանը նշեց, որ բոլոր ուսանողները գերազանց են պաշտպանել մագիստրոսական թեզերը: Ծրագրի ղեկավարը նկատեց նաև, որ մեր լավագույն շրջանավարտների 85 տոկոսից ավելին ոլորտի հայտնի անուններ են: Նրանք առանձնանում են իրենց մասնագիտական իմացություններով և բարձր որակներով: Հանգամանք, որ վկայում է դասախոսական կազմի և ծրագրի ղեկավարի կատարած աշխատաքի մասին: Ա. Ավետիսյանը տեղեկացրեց նաև, որ 2023/24 ուստարում ծրագիրն ավարտել է 13 շրջանավարտ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Գ. Մ. Աբրահամյան, Ա. Մ. Մարտիրոսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ «Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցային տեխնոլոգիաներ» կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- **Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի առկա ուսուցման անվճար համակարգի առաջին տարվա ասպիրանտ Գարիկ Կարոյի Հարությունյանին ատեստավորելու հարցը (թեկնածուական ատենախոսության թեման՝ «Արհեստական բանականության կիրառման առանձնահատկությունները հայաստանյան առցանց մեդիայում»):**

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Ջ. Ջ. Սարգսյան:*

<u>ՈՐՈՇԵՑԻՆ.</u>- Հաշվի առնելով կատարված աշխատանքի ծավալը՝ Գ. Կ. Հարությունյանի կատարած աշխատանքը համարել բավարար և ատեստավորել:

Նիստի ավարտին գիտխորհրդի անդամ ուսանողները հանդես եկան մի շարք առաջարկություններով, ներկայացրին իրենց մտահոգող հարցերը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ջ. Ջ. ՍԱՐԳՍՅԱՆ